

ՀԱՅՈՑ ԱՌԱՍՊԵԼԱԿԱՆ ԵՒ ՊԱԾՏԱՄՈՒՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ Հ. Դ. ԱԼԻՇԱՆԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԴԻՏԱԿԵՏՈՒՄ

Հայ բանագիտութիւնը սկզբնաւորուել է ԺԹ. դարի կէսերին՝ միջնադարից գրաւոր աւանդուած հին բանահիւսական յուշարձանների հետազօտութեամբ (Մ. Խմին «Վէպք հնոյն Հայատանի» (1850), Յ. Գաթթըճեան «Պատմութիւն մատենագրութեան հայոց» (1851), Գ. Զարբհանալեանի «Պատմութիւն հայկական հին դպրութեան» (1865), Մտ. Պալասանեան «Պատմութիւն հայոց գրականութեան» (1865ին հրատարակուած սոյն աշխատութեամբ, ժամանակի բանագիտական ուսմունքների տեսական դրոյթների հիմքով, քննուում եւ տրուում է գրականութեան ու ժողովրդական բանահիւսութեան նկարագիրը, առանձնայատկութիւնները եւ այլն): Յիշեալ գործընթացին համաքայլ՝ մեկնարկել են նաեւ կենդանի գոյատեսող բանահիւսական նիւթերի գրառումներն ու հրապարակումները (Հ. Դ. Ալիշան «Ռամկական երգի հայոց» (1852), Գամառաթիպա «Ազգային երգարան» (1856) ու Միք. Միանսարեանց «Քնար հայկական» (1868), որն ունի բանագիտական ուղղուածութիւն):

Հայ բանագիտութեան պատմութեան այս փուլի քննութեամբ՝ կանդրադառնանք մշակութային մի կենարոնի, որն իր գործուն մասնակցութեամբ կարեւոր դեր է կատարել բանահաւաքչութեան ու հայ բանագիտութեան կայացման գործուն: Խօսքը Միխիթարեան միաբանութեան մասին է, որն ահռելի ներդրում ունի հայագիտութեան տարբեր բնագաւառների առաջընթացում: Մատնանշենք յատկապէս «Բազմավէպ» եւ «Հանդէս ամսօրեայ» պարբերականները, որոնց մեծաթիւ հրապարակումներ եւ ուսումնասիրութիւններ նուիրուել են բանահիւսութեանն ու բանագիտութեանը:

Միխիթարեանները կարեւոր նուաճումներ են արձանագրել գիտութեան գրեթէ բոլոր ոլորտներում՝ քննութեան առնելով հա-

յագիտական, մանկավարժական, բնագիտական, քիմիական, երկրաբանական, բուսաբանական, մաթեմատիկական, բժշկագիտական, մեքենագիտական եւ այլ գիտութիւնների կարեւոր խնդիրներ:

Հայ բանագիտութեան սկզբնաւորման շրջափուլում առանձնանում է յատկապէս Ղեւողդ Ալիշանի գիտական վաստակը, որը գասական հայագիտութեան մէջ մնայուն եւ բացառիկ է: Ալիշանը հայ ժողովրդական բանարուեստը արժեւորող առաջին բանահաւաք-ուսումնասիրողներից էր՝ ժողովրդագիտութեան նախակարապետներից: Հայագիտական առարկաների ընդգրկման առումով՝ Ալիշանի գիտական տեսադաշտը լայն է ու համապարփակ: Նրա գիտական նախասիրութիւնները արծարծում են բազմաթիւ յօդուածներում եւ աշխատութիւններում: «Բազմավէպ»ի էջերում հրատարակուած մեծաքանակ բանագիտական, ժողովրդական տօներին եւ հաւատալիքներին նուիրուած ազգագրական յօդուածները, ինչպէս նաև՝ «Տեղագիր Հայոց մեծաց» (1855), «Այրարատ», «Ծիրակ», «Սիսական», «Սիսուան», «Նշմարք հայկական» (պր. 1-3), «Բնախօսութիւն Հայաստանի», «Հայապատում», «Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց» փաստաշատ աշխատութիւնները, մինչ օրս չեն կորցրել իրենց տեղագրական, պատմաքաղաքական, մատենագիտական, հնագիտական, ազգագրական ու բանագիտական կարեւոր՝ յաճախ սկզբաղերային նշանակութիւնը:

Քննական հայեացքով անդրադառնանք ականաւոր գիտնականի յատկապէս այն ուսումնասիրութիւններին, որոնք նուիրուած են հայ բանարուեստին ու բանագիտութեանը:

Ալիշանը փորձում էր բացայացել եւ ճանաչելի դարձնել հայի ոգին ու բնաւորութիւնը՝ սեփական ժողովրդի անցեալի եւ ակունքների հետազոտութեամբ: Ժամանակի փիլիսոփայացական եւ բանագիտական ուղղութիւնների գաղափարական ազգեցութեամբ՝ բանահիւսութեանը նուիրուած նրա բոլոր յօդուածներում եւ ուսումնասիրութիւններում կարեւորում է մասնաւորապէս ազգային ոգու առկայութիւնը. դեռեւ «Ազգային երգերու եւ ուրիշ աւանդներու վրայ» յօդուածում (1843) ազգային բնաւորութիւնը եւ հոգին ճանաչելու կարեւորագոյն աղբիւր է գիտարկում բանաւոր աւանդութիւնը. «Ճշմարիտ ազգասիրի մը առջեւ շատ յարգի բաներ են նաեւ այն աւանդները, որ բերնէ բերան անցնելով, ինչուան իր օրերը հասած են»¹, քանի որ, ըստ յօդուածագրի՝ ազգի

¹ ԱԼԻՇԱՆ, Հ. Դ., Երկեր, Երեւան 1981, 99:

պատմութիւնը, բնաւորութիւնը, սովորութիւնները, լեզուն ու լեզուական փոփոխութիւնները «ոչ միայն գրաւոր պատմութիւններէ կիմացուին, հապա նաև ան գրաւոր յիշատակարաններէն առաջ՝ անգիր աւանդութիւններով կիաստատուին»²: Ալիշանը նկատում է, որ հին ու միջնադարեան պատմիչներն առանձնայատուկ ջանքով են հաւաքում ազգային պատմութիւնները, երգերն ու առակները: «Մեր Խորենացին ալ շատ եռանդուն ջանքով եւ իմաստուն ընտրութեամբ իր պատմութեանը մէջ իբրեւ անգին գանձ հաւաքեր ու պահեր է մեզի մէկ բանի հին երգեր ու աւանդութիւնները, որոնց վսեմ գեղեցկութեանը վրայ ոչ միայն մենք, այլեւ օտարները կզմային ու կը զարմանան: Իրաւ է,- ընդգծում է Ալիշանը, - որ շատ անգամ այսպիսի երգերուն ու աւանդութիւններուն մէջ ճշմարտութիւնը առասպելներով զարդարած կ'ըլլայ, բայց Խորենացիին պէս լուսաւոր միտք ունեցողը անոր չնայիր, հապա ան առասպելը շինողին վախճանը կը հասկնայ եւ անով գոն կ'ըլլայ: Թող լեզուին աղուրութիւնը, բանաստեղծական բացատրութիւնը եւ ընդհանրապէս ազգային հոգի (ընդգծումն իմն է - Լ. Հ.) ըսուածը, որն այդպիսի աւանդութեանց մէջ խիստ պայծառ կտեսնուի»³:

Ուշագրաւ է նաեւ «Քնար հայկական» յօդուածաշարի անդրանիկ՝ «Ազգահոգի կամ բնիկ հայկական բանաստեղծութիւնն» յօդուածը, որտեղ Ալիշանը դարձեալ շեշտում է «Վարդգէս Մանուկ» կամ «Վահագնի ծնունդ» «Վառվըռուն երգերի»⁴ բուն ազգային ոգին:

Բանահիւսութեանը դիմելու Ալիշանի հիմնաւորումները խարսխում են 18-րդ դարի գերմանացի նախառոմանտիկ Հերդերի «Փողովրդի ճայնը երգերում» տարբեր ժողովուրդների երկերի ժողովածու (1778-1779), ոռմանտիկներ՝ Շլեդել եւ Գրիմ եղբայրների «Գերմանական իրաւունքի հնութիւններ», «Գերմանական առասպելաբանութիւն», (1835) եւ այլոց տեսական դրոյթների վրայ, որոնք ժողովրդական երգերի մէջ տեսնում էին «ժողովրդի ճայնը, ժողովրդական մարմնաւորուած կամ աւանդական ոգին»⁵:

Եօհան Գոթֆրիդ Հերդերն իր «Գաղափարներ մարդկութեան պատմութեան փիլիսոփայութեան շուրջ» երկում, անդրադառնալով ազգային բնաւորութեանը, գրում է. «Ազգի գենետի-

2 Անդ:

3 Անդ:

4 Բազմավեպ, 1848, թիւ 6, 88:

5 ՑԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ, Ս., Բանագիտական ակնարկներ, Երևան 2010, 52-56:

կական ոգին, բնաւորութիւնը տարօրինակ եւ ցնցող բաներ են: Այն չի բացադրում. հնարաւոր չէ նաև ջնջել երկրի երեսից. այն իին է, ինչպէս ազգը, իին ինչպէս հողը, որի վրայ ապրել է ազգը⁶: Ալիշանը նոյնպէս ունի այս համոզմունքը, ինչը կարելի է մակարերել իր բազմաթիւ յօդուածներից ու եզրայանգումներից:

Ալիշանի հայեացքները զուգադրում են նաև Ֆրիդրիխ Վիլհելմ Ֆոնդէֆ Շելինգի հայեցակէտին, ով առասպելը դիտում է իրուեւ ազգի պատմական ճակատագիրը վճռորոշող գործօն, այսինքն՝ ազգը ճանաչելու եւ հետազոտելու ելակէտ⁷: Այս տեսակէտից՝ հայ բանահիւսութիւնը, հայ հին վիպական աւանդութիւնը, հնդեւրոպական ընդհանրութիւնից եկող առասպելաբանական մի շարք գիպաշարերով, մոտիւներով եւ կերպարներով, կրօնական հաւատալիքներով ու պատկերացումներով՝ որպէս հինաւուրց ժողովուրդի հոգեւոր մշակոյթի բանաստեղծական համակարգ, գրաւել է նաև Ալիշանին:

Դիմուկ է Դանիէլ Վարուժանի «Ալիշանը բանաստեղծ էր, որ գիտութիւն կ'ընէր...» բնորոշումը: Իրաւամբ՝ բանաստեղծ եւ արձակագիր Ալիշանը, յաճախ է անդրադարձել այնպիսի նիւթի, որը գտնուել է նաև հայագէտ Ալիշանի տեսադաշտում: Այսպէս՝ հայոց ազգածին առասպելը դարձել է ե՛ւ պատմա-բանագիտական խնդիրների գիտական քննութեան առարկայ, ե՛ւ բանաստեղծի ներշնչանքի աղբիւր: Տարբեր ծագում ունեցող հաւատալիքների, էթնոմշակութային փոխազդեցութիւնների, բազմաթիւ սիւժէների ու կերպարաշարերի բարդ համակարգը՝ հայ հին առասպելաբանութիւնը, որի ակունքները ձգւում են մինչեւ հայերի ազգածագումը, առանձնանում է հինգ հիմնական առասպելոյթներով, որոնցից է աստեղային հերոս-որսորդ-աղեղնաւորի պայքարը խաւարի բռնակալի դէմ (Հայկի եւ Բէլի մասին առասպելը)⁸: Հայոց ազգածագման առասպեկլն ու Հայկի կերպարը գրաւել են բանաստեղծ Ալիշանին, ով իր «Հայոց աշխարհիկ» բանաստեղծութեամբ ներկայացրել է այն հայոց մեծագոյն յաղթանակների համատեքստում: Հայկը՝ հայկական ցեղի, երկրի հիմնադիր, անուանատու նախնի, իսկ նրա հակառակորդ Բէլը՝ հայրենի երկիր խորժած բարելոնցի բռնակալ.

6 ГЕРДЕР, И. Г., *Идеи к философии истории человечества*. М. 1977, 314.

7 ШЕЛЛИНГ, Ф., *Соч.* в 2 т., Т. 2. — М. 1989, 159—374.

8 ԹԱՐՈՒԹԻՒՆՆԱՆ, Ս., Բշ. աշխ., 128:

Շատ կըտրընուորայք հանեց Հայաստան,
Շատ թէկը փլուցին քաջքն Հայկի նըման.
Հոռոմն, Ասորին, Մար, Սըկիւթ, Պարսիկ

Հայոց թքերուն եղան պատառիկ.
Այս սարեր, առեր ու դաշտեր ամեն
Կարմիր են քրտնել, կարմիր խըմել են.
Ի հոն են խաղցել Տիգրան ու Տըրդատ,

Վարդանն ու Վահան, Աշոտ ու Սըմբատ:⁹

«Հայոց ազգային պարծանքները» յօդուածում **Ալիշանը Հայկին** դարձեալ ներկայացնում է իբրեւ պատմական կերպար, իսկ նրա մենամարտը համարում «հին եւ ստոյգ եղելութիւն», որից սկսում է հայոց պատմութիւնը: Հայկն, ըստ յօդուածագրի, հայ ժողովրդի մեծագոյն «անհատներից ու պարծանքներից» գլխաւորն էր, ով իր կերպարով կարող է դառնալ թերարժէքութեան բարդոյթով կամ օտարամոլութեամբ տառապող ազդի «պակասութեան դարմանը»¹⁰:

Ալիշանը յիշեալ թեման քննում է երկու դիտանկիւնից՝ պատմական, որի սկզբնապատճառը հնագոյն դիցավէպի պատմականացուած շարադրանքն էր եւ դիցաբանական: Ըստ առաջինի՝ Հայկի եւ Բէլի ճակատամարտը եղել է պատմականօրէն վկայուած իրադարձութիւն, որը նաեւ հայ ժողովրդի կազմաւորման եւ ազգածագման պատմութիւնն է: **Ալիշանը** փորձել է նոյնիսկ վերակազմել յիշեալ իրադարձութիւնների ստոյգ ժամանակը: Ըստ նրա տոմարագիտական հաշուարկների՝ Հայկի եւ Բէլի (Նեմրովի) ճակատամարտը տեղի է ունեցել թ. ա. 2492 թուականին: Ժամանակագրական այս վերահաշուարկի համար **Ալիշանը** հաշուի է առել այն փաստը, ըստ որի 428 թ. Նոր Տարին՝ Նաւասարդի 1-ը, հայկական արեգակնային շարժական օրացոյցով համընկել է յուլիսան տոմարի օգոստոսի 23-ին (այժմեան օրացոյցով օգոստոսի 11-ին): Հայոց բուն տոմարի մէկ տարին բաղկացած է 12 ամսից՝ իւրաքանչիւրը 30 օր եւ հինգ յաւելեալ (Նոր Տարին տօնելու) օրերից, որոնց չորս տարին մէկ գումարում էր եւս մէկ յաւելեալ օր: Նաւասարդի 1-ը, ինչպէս եւ միւս տօնելու, դրա հետեւանքով, դառնում են շարժական եւ կրկնւում 1460 տարին մէկ, ինչը համապատասխանում է աստղային համակարգում արեւի մէկ լրիւ շրջապատոյտին: Հաշուի առնելով աստ-

9 ԱԼԻՇԱՆ, Հ. Դ., Երկեր, 18-19:

10 Բագմավէպ, 1843, թիւ 16, 253-255:

ղագիտական այն դիտարկումը, համաձայն որի՝ «Հայկական ցիկլը» կամ աստղային համակարգում արեւի մէկ լրիւ շրջապտոյտը կրկնում է 1460 տարին մէկ, եւ ընդունելով, որ ճակատամարտից՝ մինչեւ 428 անցել էր երկու շրջապտոյտ, նա որոշել է Հայկի եւ Բէլի միջեւ տեղի ունեցած ճակատամարտի տարեթիւը՝ 2492 Ք.ա., որն, ըստ Ալիշանի, ընդունել են նաեւ յոյն պատմիչներ Աֆրիկանոսն ու Եւսեբիոսը¹¹:

«Հին հաւատոք կամ հեթանոսական կրօնք հայոց» աշխատութեան մէջ Ալիշանը, զուգադրելով Օրիոնին եւ Հայկին, քննում է հնամենի տիեզերական առասպելը, որտեղ հայոց նախնի Հայկը պահպանել է իր սկզբնական՝ տիեզերական-առասպելական կերպարի յատկանիշները, քանի որ առասպելի ենթահիմքում ընկած է լոյսն ու գարունը խորհրդանշող աստուածային աղեղնաւորի պայքարն ընդդէմ խաւարն ու ձմեռը մարմնաւորող բռնակալի¹². Օրիոնը՝ Պասեղոնի (Նեպոտոն) եւ Էւրիալի առասպելական որդին, քաջ որսորդ է, որ յանդկում է Անահիտի (Արտեմիս) հետ մրցել նետաձգութեան ասպարէզզում, դառնում վերջինիս նախանձի զոհն ու մահանում կարիճի իսայլթոցից¹³: Սակայն դիցուհին զղում է՝ փոխակերպելով որսորդին մեծապայծառ աստղի: Ալիշանը իրաւացիօրէն ընդդում է հայոց եւ յունաց աւանդութիւնների զուգահաւասարումը՝ մատնանշելով Հայկի քաջ աղեղնաւոր, առաջին տոմարադիր լինելն ու երեքթեւեան նետերով

¹¹ ԱԼԻՇԱՆ, Հ. Ղ., Հայկայ շրջամ տօմար եւ քուական հիմ հայոց հայադիր: Յուշիկը հայրենեաց Հայոց, Բ. տպագրութիւն, Ս. Ղազար, Վենետիկ, 1921, 72-97:

¹² Հայկը բուն հայկական ցեղերի նախնի աստուածութիւն է, որի պաշտամունքը սկզբնաւորուել է հայոց մէջ, հաւանաբար, ցեղային համախըմբան վաղ շրջանում եւ գոյատեւել յետագյուտ: Այս ժամանակաշրջանում բնութեան ուժերն ու երեւոյթները խորհրդանշող տիեզերաբանական առասպելները տեղայնանում, պատմականանում եւ վիպականանում են, հետեւաբար, առասպելների նախնի աստուածները կամ դիցազուները վերածում են ցեղային նախնու կամ նահապետի, իսկ աշխարհի արարչագործութեան նախաստեղծ սրբազն ժամանակը վերածում է պատմական ժամանակի՝ կապունով տուեալ ցեղամիութեան սկզբնաւորման ժամանակի հետ: Պարփակում է նաեւ առասպելի նախնի համատիեզերական դիպաշարը: Տե՛ս ՅԱՐՈՒԹԻՒՆԵՑԱՆ, Ս., Հիմ հայոց հաւատալիքները, կրօնը, պաշտամումքն ու դիցարանը, Երեւան 2001, 23-24:

¹³ Տարբերակներից մէկում Օրիոնը սպանում է Արտեմիսի նետից, քանի որ վերջինս անարգել էր աստուածութիւն:

իր ախոյեան Բէլին սպանելը: Ցիշեալ զուգադրութեամբ՝ Ալիշանը չի բացառում, որ այս պատմութիւններն առասպել եւ վիպասանք են¹⁴:

1893 թուականից «Բազմավէպ»ում պարբերաբար հրատարակուող, այնուհետեւ՝ 1895ին վենետիկում առանձին գրքով տպագրուած «Հին հաւատք կամ հերանոսական կրօնի հայոց» մենագրութիւնն աննախադէպ էր՝ իբրեւ հայոց նախնական եւ նախաքրիստոնէական հաւատալիքների, կրօնական պաշտամունքների, ինչպէս նաեւ դիցաբանութեան համակարգուած ուսումնասիրութիւն. հայոց հաւատալիքների, կրօնի, պաշտամունքի ու դիցարանի համակարգը էթնոսի ձեւաւորման եւ պատմական զարգացման արգասիք է՝ հնդեւրոպական ցեղակցական ընդհանրութիւնից սերող հաւատալիքներով ու կրօնապատճեական պատկերացումերով, յետագայում՝ հայ էթնոսին միաձուլուած ցեղերի եւ ցեղախմբերի, ինչպէս նաեւ տարբեր քաղաքակրթութիւնների փոխազդեցութեամբ ձեռքբերուած կրօնապաշտամունքային շերտերով¹⁵: Աշխատութեան ոճի եւ նպատակների մասին հեղինակը նշում է հետեւեալը. «...մեր ազգային աւանդութիւնը սիրող կամ քննող բանասիրաց՝ կ'ուզեմք կրկնել, եւ ներկայացնել, ըստ կարի համաօստ, առանց շատ վեր վար բռչւտելու եւ ի խորս մտնելու, որոյ համար ոչ թե ունինք եւ ոչ բաւական ոյժ՝ ըստ պահանջից հմտագունից՝ այլ պարզ եւ ուամկարար նշանակելով ինչ որ մեր նախնիք եւ օտարազգիք այլ ի գրուածս, եւ ինչ որ նիւթական յիշատակարանից՝ աւանդեր են Հայոց կրօնից վրայօք, եւ ինչ որ նշմարուած է եւ դեռ նշմարուի յազգային կարծիս, յուղիդ եւ ի ծուռ հաւատս եւ սովորութիւնս»¹⁶:

Սոյն գործի տասանչորս՝ կրօնի. Հաւատք եւ Պաշտօն, Աստուած, Բնապաշտութիւն, Ախտարք կամ աղթարք, Կենդանեաց պաշտօն, Հըրէշք, Ոգեղենի, Դիցազգունի, Դիք. Պաշտօն շաստուածոց, Մոգութիւն-Մազդեզանց աղանդ, Հմայք. Գուշակութիւնի, Հարցուկի, Կախարդանի, Հանդերակալ կեանի եւ Պաշտամունի, Պաշտօնարանի, Պատօնեայք, Սպասք գլուխներում, հեղինակը ցուցաբերել է բանասէրի, պատմաբան-մշակութաբանի, նոյնիսկ բուսաբանի հմտութիւններ՝ խօ-

14 ԱԼԻՇԱՆ, Հ. Ղ., Հին հաւատք կամ հերանոսական կրօնի Հայոց, Վենետիկ, Ս. Ղազար, 1910, 131- 133:

15 ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ, Ս., Հին հայոց հաւատալիքները, կրօնը, պաշտամունքն ու դիցարանը, Երևան 2001, 5:

16 ԱԼԻՇԱՆ, Հ. Ղ., Հին հաւատք կամ հերանոսական կրօնի Հայոց, 4:

սելով երկնային լուսատումների, համաստեղութիւնների, հայոց բը-նաշխարհի, հմայութիւնների, հանդերձեալ կեանքի, տարրերի, չար (չարք, ուրուականք, վատք, դեւք, թպղայ, ալք, շուռտ, յուշկապարիք, խիպլիկ, խիպիլիկ կամ խլվիկ եւ այլն) ու բարի ոգինների (յաւերժահարսունք, հրեշտակք) մասին ժողովրդական պատկերացումների եւ ըմբռնումների, նաեւ հայոց դիցարանի շուրջ:

«Ղետնեղ Ալիշանը եւ հայոց երգերն ու հաւատալիքները» յօդուածում Սարգիս Յարութիւննեանն այս հետազօտութեան արժանիքներից է համարում, յատկապէս, քրիստոնէութիւնից հազարամեակներ առաջ ապրող հայկական ցեղերի նախնադարեան հաւատալիքների ու պաշտամունքային համակարգի՝ տարրապաշտութեան, բնապաշտութեան, ոգեպաշտութեան, աստուածային հերոս-նախնեաց պաշտամունքի, կրօնապաշտամունքային նախնադարեան ձեւերի (հմայութիւն, գուշակութիւն, մահուան եւ հանդերձեալ կեանքի պատկերացումներ), ախտարային հաւատալիքների, նաեւ՝ աւելի ուշ շրջանի դիցարանի, պաշտամունքատեղիների ու պաշտամունքային հասկացութիւնների քննութիւնը, քանի որ Ալիշանն առաջինն էր մեզանում, ըստ Յարութիւննեանի, որ ազդաբանական հետազօտութեան ենթարկեց հայոց նախաքրիստոնէական հաւատալիքների, առասպելաբանութեան եւ կրօնական պաշտամունքների ողջ համակարգը: Նկատենք, որ մինչ այս մենագրութիւնը, ի հարկէ, եղել են գործեր, որոնք անդրադարձել են հայոց հեթանոսական կրօնին, հաւատալիքներին, առասպելներին եւ գրոյցներին՝ Յ. Գաթըրճեանի «Պատմութիւն մատենագրութեան հայոց» անհաւարտ աշխատութիւնը (1851), Մ. Էմինի «Հետազօտութիւնն ի վերայ հայկական հեթանոսութեան» (1866), Գ. Կոստանեանի «Հայոց հեթանոսական կրօնը» (1877), որտեղ հիմնականում քննութեան է առնուած քրիստոնէութիւնից անմիջապէս առաջ գոյութիւն ունեցող պաշտօնական կրօնը: Երկրորդաբար արժեւորուել է գործի գիտական կայուն դասակարգում՝ ըստ ժամանակի ընդհանուր ազդաբանութեան սկզբունքների, կրօնագիտութեան մէջ ընդունուած մեթոդների եւ հնդեւրոպական ու այլ ժողովուրդների դիցարանական, հաւատալիքային տուեալների համեմատաբանութեան¹⁷:

Հայոց առասպելաբանական ըմբռնումների ու պակերացումների, նախնական հաւատալիքների եւ կրօնական պաշտամունքների ամբողջական համայնապատկերի համակարգային քննութիւնը

17 «Բազմավեպ», 2001, թիւ 1-4, 236-239:

պահանջում է միջդիտակարգային մօտեցումներ, որի գիտակցումը տեսանելի է Ալիշանի վերոյիշեալ գործում. ներկայացնելով, օրինակ, Հայոց մէջ խորը արմատներ ձգած եւ քրիստոնէութիւնից յետոյ որոշ գաւառներում՝ իբրեւ աղանդ գոյատեւած արեւապաշտութիւնը կամ արեւորդիների պաշտամունքը՝ նա տուեալ-ներ է հաղորդում Ներսէս Շնորհալուց, Մխիթար Ապարանցուց եւ Դաւիթ Սալաձորցուց, որոնց վկայութեամբ՝ արեւորդիներն ունեցել են պաշտամունքային ծառեր եւ բոյսեր՝ բարդի, բամբակենի, շուշան, սինձ, երիցուկ, եղրդակ: Ուշագրաւ է նաեւ Ալիշանի ենթադրութիւնը, որի համաձայն՝ «արեւով» բաղադրուած մի շարք ծաղկանուններ՝ Արեգական մայր, Արեգական ծաղիկ, Արեւորդիկ, Արեւածագ, Արեւածաղիկ, Արեւապահ եւ այլն, առնչում են այս աղանդին «...որչափ բնական պատճառաւ կոչուած են զանազան բոյս այնոր անուամբ, կրնայ դեռ՝ յոմանս նշմարի եւ կրօնական ինչ մտածութիւն»¹⁸:

«Հայրուսակ կամ հայկական բուսաբառութիւն» աշխատութեան (1895) հեղինակն ու բնագէտն, իբրեւ արեւի պաշտամունքի հետք է դիտում տուեալ աշխատութեան բոյսերի շարքում ներառուած յիշեալ բուսանունները, որտեղ ընդգրկուած են նաեւ արեւադիմ, արեւաբաց եւ արեւապաշտ ծաղիկները¹⁹:

Աշխատութեան «Բուսեղինք եւ Ծառապաշտութիւն» գլխում, անդրադառնալով բոյսերի եւ ծառապաշտութեան դրսեւորումներին, առանձնացնում է Հայերի համար պաշտամունքային նշանաբանութիւն ունեցող բոյսեր եւ ծառատեսակներ, միաժամանակ չեւկութիւն հետեւութիւնները համապարփակ տեղեկութիւններ են ներն ու հետեւութիւնները համապարփակ տեղեկութիւններ փոխանցում հայոց բնապաշտական հաւատալիքների, պատկերագրումների եւ սովորոյթների վերաբերեալ: Ալիշանը ներկայացնում է Հայերի, յոյնների, կելտերի, դրուիդների, գելմանացիների նում է Հայերի, յոյնների, կելտերի, դրուիդների, գելմանացիների եւ այլ ժողովուրդների պաշտամունքային մի շարք բոյսեր ու ծառեր, պաշտամունքատեղիներ, հաւատալիքներ ու սովորոյթ-առեր, հաւատալիքներ, հաւատալիքներ հետո կապուած աւանդագրոյցներ: Աներ, ինչպէս նաեւ դրանց հետ կապուած աւանդագրոյցներ: Առանձնացնելով կաղնին, տանձննին, մալրին, սօսին, բարդին, լոշտակը, փենունան, համասփիւռը կամ համասպրամը, երինջանիթակը, փենունան:

18 ԱԼԻՇԱՆ, Հ. Դ., Հիմ հաւատք կամ հերանոսական կրօնք Հայոց, 105:

19 ԱԼԻՇԱՆ, Հ. Դ., Հայրուսակ կամ հայկական բուսաբառութիւն, Վենետիկ 1895, 56:

տակը, կախարդական զօրութիւն ունեցող՝ ադամանտը, դիոր-փոսն ու արաքսայ-կուսահալածը, ներկայացնում է փաստաշատ ուսումնասիրութեան աղբէւրագիտական հենքը (Մ. Խորենացի, Ներսէս Շնորհալի, Գր. Մագիստրոս, Մխիթար Գօշ, Մխիթար Հերսէս Եղիշէ Երէց, Պլուտարքոս, Կտեսիփոն, արաբ հեղի-չերացի, Պլինիոս Երէց, Պլուտարքոս, անակներ, երազահաններ, աղթարքներ եւ բժշկաբաններ)՝²⁰:

Վերոյիշեալ բուսանունները տեղ են գտել 1895ին հրատա-
րակուած մէկ այլ՝ «Հայրուսակ» աշխատութեան էջերում։ Այստեղ
գիտնականն առաջնորդուել է միեւնոյն սկզբունքով՝ հանդամա-
սորին ներկայացնելով բոյսի հայերէն եւ լատիներէն անուանում-
ներն ու բուսատեսակը, նկարագիրը, առանձնայատկութիւնները,
ներն ու բուսատեսակը, աշխարհագրական հայրենիքը՝
բուժական յատկութիւններն ու աշխարհագրական հայրենիքը՝
չմուռանալով նաեւ մի շարք աւանդութիւններ ու հաւատալիք-
ներ, որոնք առնչւում են տուեալ բոյսի հետ, ինչն առաւել ար-
ժէքաւոր եւ միջդիտակարգային է դարձնում հետազօտութիւնը։
Այսպէս՝ խօսելով սօսի կամ սուսի ծառի մասին, Ալիշանը տեղե-
կացնում է, որ այն ունի սպիտակ խոչոր տերեւներ, բուժական
յատկութիւններ, եւ նոյնիսկ մոխիրն է օգտակար խորը խոցերի
բուժման համար։ Այնուհետեւ անդրադառնում է սօսու պաշտա-
մունքին, որը տարածուած էր հայերի եւ յոյների մօտ։ Ապօնի
տաճարի շուրջ՝ այս ծառերի շուրջի տակ էին նստում յոյն իմաս-
տածարի շուրջ՝ այս ծառերի շուրջի տակ էին նստում յոյն իմաս-
տածարին ու նրանցից իմաստնագոյն Սոկրատէսը «կ'երդուրն-
նար ի Սոսի»²¹:

Հայոց մէջ սօսու պաշտամունքի մասին գրում է հետեւեաւը. «...իսկ մեր Հայկազն նախնեաց տաճարն՝ նոյն իսկ Սօսեաց անթառն կամ ծառառունկն էր, գերկինքն ունենալով բնակամար գրման կամ ծառառունկն էր, գերկինքն ունենալով բնակամար գրման կամ ծառառունկն էր, ինչ կատարուէին իրենց պաշտամունքն եւ նուէրքն, եւ անթեք, եւ հոն կատարուէին իրենց պաշտամունքն եւ նուէրքն, եւ անթեք, եւ հոն կատարուէին, ինչպէս մեր Գևդեցիկ Արայի քոռան ձամք իսկ հոն նուիրուէին, ինչպէս մեր Գևդեցիկ Արայի քոռան (Անուշաւան) համար կ'ըսուի, թէ «Սօս անուանիւր, կամ Սօսանուէր, բանզի ձօնեալ էր ըստ պաշտամանց ի Սօսիսն Արամենակայ՝ նուէր, բանզի ձօնեալ էր ըստ պաշտամանց ի Սօսիսն Արամենակայ՝ որ յԱրմանիք, գորոց զաղարքիցն զօսափիւն, ըստ հանդարս եւ կամ սաստիկ շնչելոյ օդոյն, եւեր՝ ոստոց շարժումն՝ սպիրեցան ի հմայ՝ լաշխարիկ Հայկազնց. եւ այս գրագում ժամանակս»²².

Աղջանը մատնանշում է մի շարք բռյակներ, որոնց մասին՝ Աղջանը կարծիքով, հիւսուել են աւանդազրոյցներ, սակայն դրանց նրա կարծիքով,

²⁰ Ալլ իշխան, չ: Դ:, Հիմ հաւատի կամ հերանուական կրօնի Հայոց, 75-88: 585:

ԱՐԵՎՈՅ, չ. 1., Հայութիւն կամ հայութիւն կամ հայկական բուսաբառիւն, 585:

21 ԱՀԻՒ
22 ԽԵՐ:

բովանդակութիւնն ու դիպաշարերը չի ներկայացնում։ Նկարագրելով, օրինակ, աղբերաց արիւն ծաղիկը՝ գիտնականը ենթադրում է, որ բուսանունը առնչում է՝ հին եւ մոռացուած ստուգաբանական մի աւանդութեան հետ²³։ Ի դէպ, աղբարանց արուն կամ եղբայրարիւն (դիմելիխպէա) տուրելիքորին ծաղկի մասին աւանդութեան երկու տարբերակ է ներկայացնում Արամ Ղանալանեանը «Աւանդապատում» աշխատութեան մէջ։ Ըստ առաջին տարբերակի՝ եօթ եղբայր լեռներում սպանւում են քուրդ աւազակներից, եւ նրանց թափած արիւնից բուսնում է արնագոյն մի ծաղիկ, որի մօտ մշտապէս գտնւում է սպանուած եղբայրներին սգացող լալան։ Երկրորդ տարբերակը չարագործների ձեռքով սպանուած եօթ եղբայրների արիւնից գոյացող՝ աղբարանց արուն ծաղկի մասին է²⁴։ Նկատենք, որ Աւ. Խաչակեանի «Արամսի ծնունդը» (Աշուղ Վշտալիի գրոյցը, Հատուած «Ուստա Կարո»ից) չափածոյ լեզենդում (1904), որը հիւսուել է շիրակեան մի աւանդագրոյցի հիման վրայ՝ նոյնպէս բուսնում է վերոյիշեալ ծաղիկը։ Թշնամին առեւանդում է հովուի սիրած աղջկան, բոնաւորի ծառաները սպանւում են սիրեցեալներին, հովուի վշտահար որդեկորոյս մայրը, գտնելով որդու եւ հարսի դիմելիքները, համբուրում է նրանց եւ աւանդում հոգին։ Մօր, հարսի եւ որդու արցունքից ակնաղբիւր է բխում, իսկ նրանց թափուած արիւնից բուսնում են աղբերաց-արիւն եւ անթառամ շուշան ծաղիկները.

Արդար արիւնը չի կորչի իզուր-
Աստծու հրաշքով՝ մօր, հարսի, տղի
Արիւն-արցունքին հազար ակն-աղբիւր
Բխեցին նման լուսեղին աստղի։
Եւ գետին թափուած պուտերն արիւնի
Անուշ հոտերով ծաղիկներ դառան.
Անուշ հոտերով հազարան գոյնի,
Աղբերաց-արիւն, շուշան անթառամ։²⁵

Աշխատութիւնը կարելի է համարել մի շարք ժողովուրդների հոգեւոր մշակոյթի, բանաւոր աւանդութեան, կենցաղի, կրօնածիսական հաւատալիքների, առասպելաբանաստեղծական մտածողութեան եւ էթնիկական մտահայեցութիւնների հարուստ ու բազմաբղյութ շտեմարան։ Որտեղ, տարբեր բուսանունների յիշա-

23 ԱԼԻՇԱՆ, Հ. Դ., Հայրուսակ կամ հայկակամ բուսաբառութիւն, 22:

24 ՂԱՆԱԼԱՆԵԱՆ Ս., Աւանդապատում, Երևան 1969, 312:

25 ԻՍԱՀԱԿԵԱՆ, Ս., Երկերի ժողովածու, հ. II, Երևան 1974, էջ 168:

տակութեամբ, Ալիշանը վկայաբերում է նաեւ աստուածաշնչեան պատմութիւններ, վարքաբանական-վկայակաբանական բնոյթի զրոյցներ, պօէմներ, գանձեր, հայրէններ, շարականներ, առակներ եւ այլն:

Այսպիսով, հանրագիտակ Ալիշանի աշխատութիւններն ամբարում են հետազօտական հսկայական նիւթ եւ հիմանականում ունեն միջդիտակարգային բնոյթ, հետեւաբար, նոյնիսկ ընդգըծուած բանագիտական ուղղուածութիւն չունեցող, սակայն բանահիւսական նիւթերի առատութեամբ առանձնացող գործերը, կարող են հետաքրքիր լինել արդի բանագիտութեան համար:

ԼՈՒՍԻՆԸ ՀԱՅՐԻԵՍՆ

Summary

THE ARMENIAN MYTHOLOGICAL-RELIGIOUS SYSTEM IN Fr. GHEVOND ALISHAN'S RESEARCHAL POINT OF VIEW

LUSINE HAYRIYAN

Ghevond Alishan was one of the first collector-researchers to value the Armenian folklore. His numerous philological articles on ethnographic folk holidays and beliefs, as well as a number of factual works have not lost their topographic, historical, political, bibliographic, archaeological, ethnographic and philological significance, which are often of primary origin.

Poet and fiction writer Alishan often referred to materials that were in the field of view of his own interest. Thus, the myth of the Armenian nation became the "subject of scientific examination of historical and philological problems" and a source of inspiration for the poet. It is especially valuable Alishan's monograph called "*Ancient Faith or Pagan Armenian Religion*" as a systematic study of Armenian pre-Christian beliefs, religious cults, as well as mythology, where the author demonstrated the skills of a philologist, historian-culturologist, and even a botanist. He spoke about nature, sorcery, the afterlife, evil and good spirits, folk ideas, and about the Armenian mythology. In another work called "*The Armenian Nature (Haybusak)*" the scientist was again guided by the same principle. He presented the plant in detail, along with the traditions and beliefs associated with it. Consequently, the works of scientist Alishan store a huge amount of research material, mainly of an interdisciplinary nature, as even the works that do not have a pronounced philological orientation, stand out with an abundance of folklore materials and can be interesting for modern philology.